# ՎԱՐԱՆԴԱՑԻ

## *ԲԱՆԱՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ*

### Ա. ԴԱԴԵԱՆԻ

—

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

*Այս ժողովածուի, որ իւր մէջ պարունակում է և՛ մասամբ Խաչենում ու Դիզակում բերնէբերան պտտող բանաւոր երգերից, մեծագոյն մասը, հիմքը, Վարանդայի գիւղերայքից հաւաքածն է կազմում։ Խաչէնի և Դիզակի գիւղերում հաւաքածները միայն ժողովրդական խաղեր (քառատողեր) և ալէլույաներ են, որոնց վերեն էլ նշանակւած է ուր հաւաքած լինելը, իսկ միւս երգերը և ոտանաւորները, անխտիր Վարանդայում են գրի առնւած։*

*Այս ժողովածուն գրի է առնւած երկու հոգուց, ինձնից և իմ եղբայր Խաչիկ վարդապետից, տարբեր ժամանակներում։*

*Նա իր ընդարձակ ժողովածուն (որից քաղւածաբար հրատարակութեան համար պատրաստում եմ) հաւաքել է գիւղերը շըրջելով, երբեմն յատուկ այդ նպատակով գնալով, երբեմն էլ ուր որ իբր վանահայր, կամ ուրիշ գործով գնացել է, որի պատճառով և ժողովածուն մասնագիտական բնաւորութիւն չի կրում։ Երգերը, ոտանաւորները կան, բայց չկան թէ ումից է գրի առել, ինչ նպատակով, կամ ինչ դէպքի հետ կապւած են երգում կամ ասում. իսկ նիւթերը՝ որ ազատ ժամանակ չունենալու պատճառով խառնիխուռն թափթփած են եղել, աւելի են մթնացնում գործը։ Իսկ իմ ժողովածուն գրի եմ առել նոյնպէս ոչ իբրև բանահաւաք մասնագէտ, այլ օգտւելով հայրենիքում գտնւելու կարճ ժամանակից։*

*Խաչիկ վարդապետը գրի է առել 1885—93 թւականը, իսկ ես 1903 թւի յուլիս ամսում, այնպէս որ երկու ժողովածուների միջև 15-20 տարւայ ժամանակամիջոց է անցել, իսկ այդ ժամանակամիջոցում, ինչպէս տեսնում է ընթերցողը, ահագին փոփոխութիւն*

կայ, թէ նիւթի բովանդակութեան տարբերութեան, թէ խաղերի պատմական զարգացման ուսումնասիրութեան և թէ լեզուական ու վարեանտների ուսումնասիրութեան կողմից։ Մանաւանդ երգերի պատմական ուսումնասիրութեան կողմից, որով կարելի է շատ երգերի մասին գոնէ ամփոփ գաղափար կազմել, որը միայն մէկի ժողովածուն աչքի առաջ ունենալով հնարաւոր չէր այն երգերի նկատմամբ, որոնք կամ իմ ժողովածի մէջ կտոր կտոր եղած, առանձին-առանձին են աւում, իսկ Խաչիկ վարդապետի ժողովածի մէջ մի ամբողջութիւն են կազմում, ի մի միացած, կամ թէ ընդհակառակը։

Իսկ լեզւական կողմից ղարաբաղցերէնին այն խորթ ձևերը, ինչպիսիքն են կրուլիս, տալիս, լալիս եայլն եայլն, որոնք նոյն իսկ ինձ խորթ էին թւում և ես գրի առնելու ժամանակ կանգ էի առնում արտասանութիւնը ուղղել տալու և չէր յաջողւում, որովհետև երգ ասողը էլի նոյնն էր կրկնում, այժմ երևում է որ բաւականին երկար անցեալ ունին, և Խաչիկ վարդապետի ժողովածների մէջ ևս հանդէս են գալիս։ Ինարկէ պարզ է որ այդ ձևերը օտարամուտ ձևեր են, բայց ինչ ժամանակից և որտեղից՝ այդ արդէն պէտք է որոշել։

Վարեանտների մասնակի վերականգնում, երկու ժողովածուները ի նկատի ունենալով, մի քանի երգերինը կատարել եմ, ինչպիսին է օրինակ Պարունի երգը, որի կէսը Խաչիկ վարդապետի ժողովածի մէջ ուրիշ երգի շարունակութիւն էր կազմում, չնայած, որ այս կէսի մէջ էլ Պարուն անունը պահւած էր եայլն։ Իսկ թեթև փոփոխութիւններ քառատողերի մէջ շատ եմ կատարել, ի նկատի ունենալով հետևեալը։ Երգերը, մանաւանդ սիրոյ երգերը, ասում են աղջիկները, որոնք օտար մարդկանց մօտ ամաչում են «յար» բառը գործ ածել, որի փոխարէն ախպէր բառն են գործ ածում։ Եւ այն երգերը, որոնք հաւաքել ենք երկուսս էլ, և նրա գրի առածի մէջ ախպէր է գործածւած, իսկ իմ գրի առածի մէջ յար բառը, ես գերադասել եմ իմը, որովհետև նախ սիրոյ երգի միտքը չի համաձայնում ախպէր բառին, և ապա այն՝ որ պատահում էր ինձ հետ գրի առնելուս։ Ասողները, որ իմ ազգականներն էին *), նոյն իսկ իմ մօտն ամաչում էին «յար» ասել, և ախպէր էին ասում. երկար թախանձելուց, համոզելուց յետոյ միայն սիրտ էին անում «յար» բառը գործածել, որի պատճառով

*) Իմ ժողովածուն գրի եմ առել Վարանդայի միայն երկու գիւղում Վերին Թաղաւարդ և ոչ հեռու դրանից Ղարաբուլաղ գիւղում։ Ա. Դ.

նոյն իսկ քառատողի ամբողջ շարայարութիւնը երբեմն փոխւում էր։

Ինչպէս Խ. Վ.-ի, այնպէս և իմ ժողովածուն գրի է առնուած սովորական գրութեամբ, որի ժամանակ բարբառի յատուկ, մանաւանդ ղարաբաղցերէնին առանձնայատուկ հնչիւնները կորչում և գրութեան ժամանակ երևան չէին գալիս։ Այդ պատճառով հենց թողնելով նիւթերիս տպագրութեան տալու գործը, հետևէ եղայ պատրաստելու ղարաբաղցերէնի լիակատար բառարան և ընդարձակ քերականութիւնը, որոնցից առաջինը արդէն պատրաստ է։

Իսկ այստեղ գրութեանս համար իբրև այբուբէն ընդունել եմ պ. Հ. Աճառեանի ուսումնասիրութիւնից (Ղարաբաղի բարբառի մասին, արտատպութիւն Արարատից 1901 թւին), ուր ի բաց առեալ մի քանի թեթև խոտորումների, բաւականին ճիշտ որոշել էր ղարաբաղցերէնին յատուկ բոլոր հնչիւնները։ Ի դէպ, կարևոր եմ համարում յիշել այդ խոտորումներից մէկը, որ բաւականին դժւարութիւն է պատճառում գրելու ժամանակ։ Այդ «ը» տառի հնչման երկու տարբեր աստիճան որոշելն է, կակուղ և կոշտ, որ ինքը պարոն Աճառեանն էլ նկատել է (տես երես 6-րդ ը = ə *) տառի մասին) բայց տարբեր նշաններ չի որոշել, որով և ընթերցանութիւնը, մանաւանդ օտարի համար, բաւականին դժւարանում է։ Օր. պըւիթ, թըթըրմաղէ, աւելի լաւ կլինէր գրել ը̈-ով, որովհետև ընթերցողը թըթըրմաղէ բառի ը-երը նոյնպէս պիտի հնչի, ինչպէս որ դիցուք թըթըխըմոր բառինը, որտեղ կոշտ ը-եր են։ Աչքի է զարնում և մի աւելորդ երկբարբառի ընդունելը դարձեալ նոյն գրքում, «ուա», որը չկայ, այլ «վա» հնչիւնն է, որ շփոթեցրել է պ. Աճառեանին, նոյն օրինակները, որ այդ երկբարբառի համար բերել է պ. Աճառեանը, հնչւում է ոչ թէ թթուաշ, այլ թըթվաշ, ոչ թէ չուան, այլ չըվան եայլն **)։

Այս նոր հնչիւնաբանութեամբ գրած նիւթերը պարզ է որ

---

*) e տառն է շուռ տւած։

**) Չի կարելի անուշադրութեան մատնել և մի հիմնական սխալ, որ պ. Աճառեանինը չէ. սեռականի վերջաւորութեան համար «ըէ» ընդունելը, որը ածականի վերջաւորութիւն է, գոյականից կազմած, օր. փադը՛ և փադըէ ածականը։ Իսկ «ըէ»-ն որ իրան էլ այդպէս են հաղորդել՝ պէտք է «ու» լինի, և մի զարմանալի երևոյթ է, որ բոլոր կանոնաւոր հոլովւող բառերը սեռականում «ու» են վերջանում։

Գուցէ և պարոն Աճառեանին շփոթեցրել է որոշեալ սեռականի «ըէն» վերջաւորութիւնը, օրինակ ծառըէն, իսկ բուն սեռականը կլինի ոչ թէ ծառըէ, այլ ծառու։

կրկնակի արժէք են ստանում, քան ունէին։ Ազգագրական նիւթերը, որ միաժամանակ և լեզուաբանական նիւթեր են, չեն կարողանում վերջինիս պահանջներին բաւարարութիւն տալ, երբ այն տառերը, որոնցով գրուած են, չեն արտաբերում այն բոլոր հնչիւնները, որոնք որ կան իրապէս լեզուի մէջ։

Ընթերցողին դիւրութիւն տուած լինելու համար բերենք և այդ այբուբէնը, որ գործադրուած է այս նիւթերի արտագրութեան ժամանակ։

| Ձայնաւորներ | Բաղաձայներ | | |
|---|---|---|---|
| ա=a | բ=b | | կյ=ky |
| ա=ä | գ=ġ | ձ=dz | հ=h |
| է=e | գյ=gy | ղ=gh | ռ=rr |
| ը=ə | դ=d | ճ=tch | ս=s |
| ըէ=é | զ=z | մ=m | վ=v |
| ի=i | թ=th | յ=y | տ=t |
| օ=o | ժ=z' | ն=n | ր=r |
| ու=u | լ=l | շ=sh | ց=tzh |
| էօ=ö | խ=x | չ=tsch | փ=ph |
| իւ=ü | ծ=ts | պ=p | ք=kh |
| Երկբարբառներ | կ=k | ջ=j | քյ=khy |
| էյ=ey կամ ei | | | |
| օյ=oy կամ ei | | | |
| ույ=uy կամ ui | | | |

---

## ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փոխ=փոխաբերական.

Վար=վարեանտ.

Խ, կամ Խ. վ=Խաչիկ վարդապետի գրի առած, Վարանդայում մենակ Խ. քառատողերի մէջ նշանակում է գրի առած կամ Խաչենում կամ Դիզակում, իսկ միւս երգերի մէջ Խ-ն նշանակում է Խաչիկ վարդապետի ժողոված Վարանդայում։

# ՋԱՆ-ԳՒՒԼՈՒՄՆԵՐ

Ողիղ յարըս կըռնալ ա,
Գյիւլն ըրէսէն փըռնալ ա,
Ամէն ծառա մին փըշադ 1),
Խէլունք տըղէն ումըրը շատ։

—

Ալ 2) կանխս ալ կանխս
Բըջըլարէն 3) կոլ 4) կանխս
Բալամ 5) տըէս վըէր կընէգյըտ 6)
լու չի
Մին լով կընդան 7) տըէղ 8) կանխս։

—

Ալ տըղա ջան, ալ տըղա,
Աչկերը չալ չալ 9) տըղա,
Էտ մուստանան 10) պէր մըէր տօնը,
Ինձ գյըլըջաղ 11) տար ծէր 12)
տօնը։

—

Ախճի ախճի համ 13) օնիս 14)
Զուրուք սլուանէ 15) ծամ 16) օնիս.
Քա հօր քա մօր աչքը լիւս 17) կյա
Վըէր 18) ինձ կյուլի կամ 19) օնիս։

—

Ախճի անոււմըտա 20) Մանէ,
Լէչակտ 21) քամէ կըտանէ,
Ցէս ու տու նըշանած ըէդինք
Իմ հէր քու հօր խընամէ։

—

Ախճի անոււմըտ Մարթա,
Ցէս կյիր կյըրիմ տու կարթա,
Քու խօսկէրըտ ինձ մըհար,
Ամէն մինը մին զորթ 22) ա։

—

Ախճի յօր կօնիս 23) գյիւլ-
բիդ 24) ճաղը 25)
Կանխս անհամ 26) շուրվէն 27) աղը.
Բա 28) վըէր քյէզ յադ մարթ տանէ
Հձւ 29) յօր կօնէ սըրտէս դաղը։

—

Ախպէրըս ա փօնջ 20) մընէշակ 31)
Սիպտակ կէջին 32) թօխ 33) նշան
Ախպէր յալլէխտ ինձտօ
Տու քյընի յարէտ նշան

—

Ախպէր օնիմ Սարու շան 34)
Կօլին 35) տակը սու 36) նշան,
Ա՛խպէր, յալլէխտ 37) մին 38)
ինձ տօ 39)
Տանիմ քու յարէտ 40) նշան։

---

1) Փշատ պտուղը. 2) կարմիր, 3) Վարանդայի հարաւ-արեւելեան կողմում, դաշտավայր է, Ամարասի շուրջը. 4) կալ անել, կալսել. 5) տես որ. 6, 7) կին. 8) տեղ անել, պատրաստել նորից ամուսնանալու. 9) սպիտակ, շէկ աչքերով, 10) մատանի 11) եկող տարին, հետևեալ տարին. 12) ձեր. 13) համ, սիրունութիւն (փոխ), 14) ունես. 15) չորեքկուսի, քառակուսի. 16) ծամ. 17) լոյս. 18) որ. 19) ցանկութիւն, կամք ունես. 20) անուն. 21) գլխի շոր, քող. 22) զարդ, զարդարանք. 23) վերցնել. 24) գուլբա. 25) միլ գուլբա գործելու. 26) անալի. 27) կերակուր է ջրալի, բրինձով. 28) իսկ, մակբայ երբեմն չի թարգմանւում. 29) ձվ. 20) փունջ. 31) մանիշակ. 32) ծնօտի տակը. 33) սևագոյն. 34) անուն է. 35) ծնօտի տակ. 36) ոսկեայ. 37) թաշկինակ. 38) մի մկր. 39) տուր 40) եար։

Աղում 1) ա, հա աղում ա,
Մըդէօվանց2) ճէղացն3) աղում ա,
Մըչունք 4) տիւս ըմյէկալ 5) նի
մտալ 6)
Աչկէս տակը խաղում 7) ա։

—

Աղունս 8) շըվարալ 9) ըմ,
Պէրած 10) յէղըտ 11) հոլոլ 12) ըմ.
Ըդտ ըտէղատ 13) քաշվի 14) քյնի,
Քյըզոնտ 15) լուը ճարալ 16) ըմ։

—

Այան 17) այան տու ըրէր 18),
Ոտնգյուտնգյ 19) ծին 20) ըրէր,
Մըչանք 21) քյընիլ կյոլ 22) ըրէր
Օժավ 23) սըվու 24) տար 25) ըրէր։

—

Այ տըղա խըէ շատ շիտակ 26)
շըմալ 27) ըս,
Հոբգյոտ ծանդըրա մաշկատ ճը-
մալըս 28),
Քուէտ նախշուն չալչալ ըչկէրատ,
Արիւնըս խըմալ; խըէլքս տա-
րալըս։

—

Անապատըէն 29) սըկվ եաշկը,
Իմ յարէն ղամչին մաշկը,
Ըդտ խըրէգյ քյընիյէք,
Քյէզ յօր կօնէ չար աչկը։

—

Աշունքա 30) սորին 31) բաղ ա,
Հրսընքէն համը աղ ա,
Էս ա կյամա իմ յարը
(Ծըկատէն) քըրտնօնքը 32) գյիւլ-
լիւշաղ ա33)։

—

Ասօր 34) եօրփոթ 35) ա պաս ա,
Օտէլքըդ36) կյուռան37) մըէս38) ա,
Ըլոմ 39) աշխարք 40) քէ ղուր-
բան 41)
Այ իմ նանու 42) նոր փըէսա 43)։

—

Ավծր ավար այ տըղա,
Թօխկան սավաղ այ տըղա,
Խազած ծառէն44) տարտիւս յէկավ,
Լօխճա նոմարդ շան տըղա։

—

Ա տըղա յէք 45) քյէզ յէօխա 46)
տամ։
Ղըլղանը47) տիւս ա կյամ զէօխ48)
ա տամ,
Ամէն մին յարը տըսնալավ,
Ոտնգյ-ուտնգյ փոխ ա տամ։

—

Ա տղա տէնը տէտ 48) քյընի,
Ըռաչկավըտ 49) կյէտ 50) քյընի,
Ղարղու 51) ղամչի 52) քամէ տօ,
Թիրմա շալըտ յէտ 53) քյընի։

—

1) Աղում ա. 2) Թաղաւարդ գիւղացու մի ջրաղաց է. 3) ջրաղաց. 4) այնքան. 5) դուրս եմ եկել. 6) ներս մտել. 7) աչքի խաղալը. 8) աղուն, փռած ցորեն, գարի ևայլն. 9) մեծ մեծ ծակերով մաղի միջից անցկացնելը, որով քարերից ցորենը մաքրում են և ապա ընտրում. 10) բերած. 11) իւղ. 12) հալել. 13) այդտեղից. 14) քաշուիր գնա. 15) քեզնից. 16) ճարել եմ, գտել եմ. 17) մայրիկ. 18) արեցիր. 19) գոյնզգոյն. 20) ձու. 21) այնքան. 22) գնալ գալ. 23) ուժով. 24) սև, դժբախտութիւն. 25) տէր. 26) ուղիղ. 27) ընձուղ. 28) ցաւել է. 29) սրբատեղի է. 30) աշուն. 31) հովհար տեղ. 32) քրտինք. 33) ցողի պէս կաթիլ կաթիլ. 34) այսօր. 35) ուրբաթ է. 36) կերածդ. 37) գառան. 38) միս է. 39) ամբողջ. 40) աշխարհը. 41) մատաղ (լինի) 42) (իմ) մօր. 43) փեսայ. 44) նշան արած. 45) արի. 46) սաջի. թուջի վերայ թխած հաց. 47) բոյս է սնամէջ ցողունով և լայն-լայն տե-

*Արանա 1) արան ա,*
*Ախպիւրը 2) տյիւս կյա քարանայ,*
*Նանէ էն տըղէնան խօսէլ մըէ,*
*Խօսէլըտ սըրտէս յարան 3) ա։*

—

*Արան ա, արան ա,*
*Էն տըղան Գյիւնէ 4) Ճըրտա-րան 5) ա,*
*Ըդտ 6) սուս ըրա տըէնամ,*
*Բու մին խօսկըտ սըրտէս յարանա։*

—

*Արասխը 7) գյօլ 8) կըտա,*
*Իմ յըրէնէս տօն 9) կըտա,*
*Էն հ՞էնց 10) քյափուր 11) նա-նէ 12) կընէ,*
*Վըէր ըրախան 13) հըէռէ 14) տըէղ կըտա։*

—

*Արասխը վարար 15) կյէտ ա,*
*Զօրք կյիւսը հավքու հըէտա 16),*
*Ցէս մըշտուլուղ 17) կըտամ ընդըրա,*
*Հու իմ յարէն տըէղէն սըէտ ա։*

—

*Արասխը 18) վըէրա 19) քէցալ*
*Մաչավը 20) սէլ 21) ա քէցալ*
*Ջոհտ 22) ըրէք ջառաահ 23) պէրէք*
*Էն տըղան մաչին 24) ա քէցալ։*

*Արէվըն ընգավ մըէր պատէն,*
*Արքայութիւն իմ տատէն,*
*Հօքյիստ դադվէ 25) այ տատէ,*
*Ինձ խըէ տըվէր ըռնոտէն 26)։*

—

*Արէվը ծաքյալ 27) ա կըծոցալ 28) ա,*
*Բու յարըտ մըծացալ 29) ա,*
*Ջախտ 30) ըրա տօն 31) ընգէր,*
*Դիւշմընէտ 32) շըտացալ ա։*

—

### ՇՈՒՇՈՒ ԲԱՐԲԱՌՈՎ

*Արխ 33) ըմ կապալ 34) կյոլխ ա,*
*Ցարը ղըրաղէն 35) լալխ ա.*
*Ախճի այ յար խէլըս 36) լալխ*
*Էն ա յարըտ կյոլխ ա։*

—

*Բազար բազար իմ յարն ա,*
*Քյէնդիր բազար իմ յարն ա,*
*Շըհոր շըհոր ման կյըկյա,*
*Ջոռը յըրա տօն կյըկյա։*

—

*Բախճա 37) բըհար 38) ըմ կա-պալ 39),*
*Աղուս 40) գըհոր ըմ կապալ.*
*Ցէս էն տըղէն էօզիւմ չըմ,*
*Օժավ 41) յըրա 42) հըն 43) կա-պալ 44)։*

---

րեներով. 48) դէպի այդ կողմը. 49) առջևից. 50) գետ. 51) եղեգնեայ. 52) մորակ. 53) յետ։

1) Երաշտ տեղ. 2) աղբիւր. 3) վէրք. 4) արևի դիմաց տեղ. 5) Գյիւնէ Ճարտար գիւղ է. 6) այ տղայ. 7) Երասխ. 8) լիճ. 9) Թարախակալած 10) ինչպիսի. 11) անխիղճ. 12) մայր. 13) երեխայ. 14) հեռու. 15) յորդառատ. 16) հետք. 17) նւէր. 18) Երասխը. 19) վըէր ա քէցալ=ջուրը աւերել է ափերը և հունը աւելի խորացրել յորդառատ ջուրը. 20) միջովը. 21) սաստիկ անձրև, հեղեղ, 22) ջանք գործ դրէք. 23) բժիշկ. 24) մէջը գնացել, խեղդւել է. 25) դատի. 26) սկիւռ, ծաղրական անուն է. 27) ծագել է. 28) տաքացել է. 29) հասունացել է. 30) ջանք գործ դիր. 31) տուն ընկիր, հասիր. 32) Թշնամիներդ. 33) առու. 34) փորել, շինել. 35) ափին. 36) ինչու ես. 37) պարտէզ. 38) գարուն ծաղկած, ծաղկալից պարտէզ եմ. 39) պատրաստել. 40) դառնութիւն (եմ ինձ համար պատրաստել). 41) ուժով. 42) վերան. 43) են. 44) կապել.

Բախճան յէսըմ բարը 1) տու,
Իմ սըրտկան 2) յարը տու,
Քյէղ ընձոնտ յադ 3) կանին,
Ինձ քյըղտնտ դադ 4) կանին։

—

Բաղէս 5) չօրք 6) կիւսը 7) լօխ 8) վարթ ա 9)
Իմ յարը մին մադար 10) մարթա 11)
Կասիմ մյար տանան 12) տիւս 13) մէ կյա,
Զօրք կիւըրտ դիւշման մարթ ա։

—

Բաղըմ քյըցոլ 14) հավազի 15),
Սուփրա 16) քյըցիմ կը սազի 17)
Հու վըէր իմ հըէտաս 18) հոչի 19)
Համ թուլա 20) յա համ թազի 21)։

—

Բաքվա 22) քամէն ա կյամ,
Տըռնէրնա շըխկշըխկամ 23)
Տիւս յէկէ տըէսէ նըռնացէ
Վըէր իմ կարօտ յարն ա կյամ։

—

Բըլբիւլ 24) ընիմ բաղ ընկա,
Խըյար 25) ընիմ թաղ 26) ընիս.
Քու սաղվաթըտ 27) քյէընի,
Հըշտէղ 28) ընիս սաղ ընիս։

—

Բիւլբիւլը կանչեց բաղումը,
Քօնըս տարավ վըէչ տըէղումը,
Կանչի բիւլբիւլ ըմ 29) կանչի,
Տըէռավ 30) քու տարը տան չի։

—

Բուխարա 31) փափաղըտ ծալած 32)
Վըէսկըէքը ջուըըտ հոլոծ,
Տու մին ջոհիլ տըղա ընիս,
Շըհորին մին բուրջը 33) կոլոծ 34)։

—

Բուխարիս 35) փադ 36) կըտամ,
Կըխավըս 37) կըտավ կըտամ,
Հու 38) կյա 39) ասէ յարըտ կյամ ա,
Դանան 40) տակէն մին կավ 41), կըտամ։

—

Բուխարիս փադ կըտամ,
Փէշկէրքըս թափ կըտամ,
Հու վըէր ասէ յարըտ կյամ ա,
Ըստուծու իրէսն ըյէր 42) փառք կըտամ։

—

Բօստանը 43) բաղ ա տըէռալ,
Խըյարը թաղ ա տըէռալ,
Իմ յարը մին խօսկ ա ասալ,
Սըրտումըս դաղ ա 44) տըէռալ։

—

Գյիւլբին նախշը սազում ա,
(Իմ) յարը տըռանը հոգիւմ ա,
Շատ վախտ ա վըէր տըէսալ չըմ,
Խըէ շատ սըէրտըս էօզիւմ ա։

---

1) Միրգ. 2) սիրելի. 3) կը բաժանեն, կ'օտարացնեն. 4) կըդատեն, կբաժանեն. 5) պարտիզիս. 6) չորս, 7) կողմը. 8) ամբողջ. 9) վարդ է. 10) մինուճարը. 11) մարդ է, 12) տնից. 13) դուրս մի գայ. 14) պարտէզ տնկել. 15) հա, վազիր?, 16) սփռոց. 17) կը յարմարուի. 18) վերան, հետևից. 19) հազել. 20) շան լակոտ, փոքրիկ շուն. 21) բարակ, որսի շուն. 22) Բաքուի քամին է գալիս. 23) շըխկշըխկում. 24) սոխակ. 25) վարունկ. 26) վարունկի թուփ, թաղ. 27) երբ հեռու տեղից մի նուէր են բերում. 28) որտեղ. 29) իմ սոխակ. 30) Թէկուզ. 31) Բուխարայի. 32) վերևից որ ծալուած է լինում. 33) անկիւնը. 34) գրուած, անունը տարածուել է, համբաւը տարածուած. 35) պատի վառարան. 36) փայտ. 37) գըլխովս. 38) ով որ. 39) գայ. 40) հորթը. 41) կով. 42) իրէսն ըյէր երեսն ի վեր. 43) բանջարանոցը. 44) այրել է, վիշտ.

Դըբըրգյօնա վախտըն ա,
Այուն կյիւտած տախտըն ա,
Ախճի խըրէգյ տիւս տօն ըրա,
Տըէռնըտ 1) կյալի վախտըն ա։

—

Դըբըրգէն 2) տակը սառալ 3) ա*),
Մաննէրս 4) սառնը տարալ ա.
Ընդըղավ մին տըղա քյընէց **),
Օշու 5) մըէտքս 6) տարալ 7) ա։

—

Դըբըրիւգյիւլն 8) ա մըթըէն ա,
Տըռանը ճօխտ թութըէն ա,
Բյընի իմ նանու աւէ,
Շօռ 9) կյա փըէսան քըթէնա 10)։

—

Դինումըս ըմանումըս,
Շըհարին 11) մըյտանում 12) ըս,
Աստուծ աշխարք կըսիրիս,
Սիրտծըդ խըէ մուռանումըս։

—

Դինումըս 13) իմանումըս,
Խիլտ դորդ կա ջանումըս,
Ճէլլի 14) քյընի կանօխ 15) յէք,
Սէրոլըս խըէ մուռանումըս։

—

Ձոռ բըլբիւլ ըմ կյօլըս տէղէն,
Շօռկըկյամ Գյոնջիւ 16) կյէղէն 17),
Ցէս ջանըս մատաղ կըտամ,
Իմ յարէս ղոլիբ 18) տըէղէն։

—

Էն արշին յէշի, էն արշին,
Ճիւըը ցօըտ ա 19) էն փարշին.
Ցարը յարէն վըէր ջըհի, 20)
Համմուխաղյ ա 21) համ դարչին։

—

Էն հինչ մարթ ա տըռանը,
Սաղ ու Թըըփոնգյ 22) կուռանը 23),
Ա ղուշունա 24) յէկած տըղա,
Մըրասա 25) աչի կուռանը։

—

Էն ծըտէն 26) յէշի 27) էն ծըտէն,
Վըեննը տըըռով էն լըծէն 28),
Ընդըղավ 39) քյընէց մին ախճիգյ,
Աչկըս մընաց աջ ծըծէն 30),

—

Էն տըղան քյընէց կուլովը, *)
Հըէսկէն 31) ընգավ քօլավը, 32),
Ասից 33) թա մին յէտ յէշի,
Նըշանած նընգավ կյօլովը։

—

Ըխպըրին հըղէն ա քարէ,
Բաղէս տօռնը չըփարէ 34),
Ղդո մին խաբար ղարկէ,
Ախէր նըգյորոն 35) յէս մըէռէ։

—

Ըխպըրին հըղէն ա քարէ,
Բաղէս տօռնը չըփար է.
Ղդո մին խաբար ղարկէ յարաս՝
Էսա քյընիլն ա մին տարէ։

—

Ըխպըըրին հըղէն սառալ ա,
Մաննըս ղոլոմ տարալ ա,

*) Ըխպըրին հըղէն սառալ ա
**) Սըէվ տըղա կյոըմիւր յէխան,
կամ Թօխ չօխա կյոըմիւր յէխա,

*) Իմ յարը քյընէց կուլովը

1) Տիրոջդ, ամուսնուդ. վար. յարէտ. 2) դարպասի. 3) սառչել. 4) մատերս. 5) ուշ ու 6) միտքս. 7) տարել է. 8) իրիկնադէմ. 9) փնտրի. 10) գտնի. 11) քաղքի. 12) շուկայում ես. 13) աբարերէն=? 14) շուտ. 15) վաղ. 16) Գանձակ. 17) գիւղում. 18) օտար. 19) ցուրտ է. 20) պատահի. 21) մեխակ. 22) հրացան. 23) կուռ. 24) կուից. 25) Ամարաս. 26) ծիտ. 27) նայիր. 28) լուծ. 29) այդտեղով. 30) ծիծ. 31) ոտին, սրունքի ներքեւով պատած մի սեւ շոր է. 32) թփով. 33) ուզեց. 34) բարակ ճիւղերից գործած. 35) Նիգարան։

էն թօխ չուխա, կորմիւր յէխան,
Օշըրս խըէլքըրս տարալ ա։

—

Ըխպըրին հըղէն քըրքարուտ 1),
Քաթան 2) հալաւ ծըրծաուտ 3),
Ախճի պէր թօշատ պաչիմ,
Վըէրթըէրը 4) տար տիւս արուտ5,

—

Ըռաչիտ կըրվօղը լոչչոռ 6) ա,
Կյէօտկէնըտ7) ճօխտ8) աչառ 9) ա,
Ա տըղա խըրէգյ քյընիյէքյ,
Ըվոդը 10) յօխ քաչալ 11) ա։

—

Ըստըղան տէնը Տօղ ա 12), *)
Պըտնինըտ13)ղըվալու14փօղ ա15)
Քյըզանա ինձ հըրայ 16) չըկայ, **)
Աստուծ պէնըտ վըէչ հըճօղա։

—

Ըստըղավ 17) ըստի 18) հոն-
դեր19) ա,
Լօխ 20)ըրծաթէ21) բոնդեր 22) ա։
Տէնակ 23) պէրէք 24) սըէրտըս
ճըղիմ 25),
Բուղում բօղում 26) դորդէր ա։

—

Ըստըղավ ըստի մի յաղի 27),
Հավքէր 28) ընի կը սաղի,

*) Կյէղ ա փոխ. Տող ա
**) Ընձոնա քյըէգ հրա չըկայ

Կօղի 29) քյընիլ կյալ անիս,
Վըէչ շօն կընիս վըէչ թաղի։

—

Ըստըղավ քյընիս յանի 30) յա,
Տըխընէն Շըրվանի 31) յա,
Ցէս քյընիւմ 32) ըմ էն տըղէն,
Վըէրախպօրն անումըՎանի33)յա։

—

Ըստըղէս չթին 34) կար չըկա,
Սիւրմո35) դիւգյմա36) շատ չըկա,
Ըդո սէրտըըս 37) մուռանալ մըէ,
Քյըզանա կըման 38) ճար չըկա։

—

Ըստըղնըյէր 39)կյէտա40)կյէտա,
Զօրս ղօլը հըէտա 41) հըէտա,
Հորիւր մանէթ մըշոըլըղ 42) կը-
տամ,
Հու իմ յարէն տըէղէն սըէտա43)։

—

Ըստըղըըվէր 44) ճիւր ա քյէցալ,
Մաչավը հըէտա 45) քյէցալ,
Վըէր իմ յարըս յէկալ ա,
Ունքամանչըս 46) յըէտ 47) ա քյէ-
ցալ։

—

Ըրիքնակը հուռ հուռատում 48) ա,
Լազգին 49) շէնումը մըրսում ա,
Վըէննտ տիր ծիյին ղաշին 50);
Օշըտ կոլ ղըզըլբաշին 51)։

1) Քարքարոտ. 2) քաթանէ. 3) ծաղկաւոր. 4) հորթերը. 5) արօտ. 6) անհամեստ. 7) գօտուդ միջինը. 8) զոյգ. 9) բալանի. 10) ցեղը. 11) քաչալ, արատաւոր. 12) Տող գիւղը. 13) բերանինդ. 14) նուագածւի. 15) փող. 16) օգնութիւն. 17) այստեղով 18) այսպէս. 19) դաշտեր է (վարելահողեր), 20) բոլորը. 21) արծաթէ. 22) անցքեր. 23) դանակ. 24) բերէք. 25) պատռեմ. 26) ծալ ծալ, շերտ շերտ իրար վերայ նստած. 27)?. 28) թռչուններ. 29) թէկուզ. 30) յարմար է. 31) Շիրվանի տրեխները նշանաւոր են. 32) (ցանկանում է) գնալ. 33) Յովհաննէս. 34) չիր. 35) արծաթէ թեւերին շարելու զարդարանք. 36) արծաթէ կոճակներ թեւերին շարելու. 37) սիրել ես. 38) բացի. 39) այստեղով դէպի վերև. 40) գիտէ. 41) հետք է տանըրի. 42) նուէր. 43) տեղեակ է. 44) այստեղով դէպի ցած. 45) հետք. 46) յօնքամէջ. 47) բացուել. 48) այրւում է. 49) լեզգին. 50) թամբի առջևի մասը. 51) պարսիկ։

*Ըրեքյնակը մըրըմարա 1)*
*Նըշանածը նըշըանածէն սըրվըտար 2) ա,*
*Ցէկալ ա բէդի տանէ,*
*Ցէրգյիր 3) մազա կը հանէ։*

—

*Ըրեքյնակը տըվալա տըհտրին,*
*Շէգյ շէգյ ըէդէր գըրմըղի յարին,*
*Իմ յարը քյընէց սոփոր,*
*Աստուծ տա խէրն ու պարին։*

—

*Ըրեքյնակը տըվավ կըրանէն 4),*
*Ցէս մատաղ ըմ ըվըտըրանէն 5),*
*Ըվըտըրտոն մին յըղօնէգյ Թըրչից,*
*Կանանչ խօտը պըրանէն։*

—

*Ըրեքյնակը տխւս կյըկյա,*
*Մնտկէն յըրա լիւս կյըկյա,*
*Հու խըէր 6) պէնուժ շառ 7) խօսէ,*
*Բըլէն 8) աչկէրը Թող տխւս կյա։*

—

*Ըրեքյնակը ցըցալ 9) ա,*
*Իմ փայ կօլաս լըցալ ա,*
*Փխս նանուն 10) աչկը տխւս կյա,*
*Վըէր ինձ հընգըրմաչա 11) քյըցալ ա։*

—

*Ըրեքյնակն ա մըրըմար 12),*
*Հալալ 13) ըրէք հօր ու մար 14),*
*Վըէր առալ ա կըտանէ,*
*Հընգըրմաչա 15) կըհանէ։*

—

*Թամքու տէնակ Թամքումը,*
*Թառ յըղօնէգյ վանքումը,*
*Իմ յարը հըշտըէղ տըէսէր,*
*Շօշվա 16) ղըլէն 17) շամքումը 18)։*

—

*Թընջանը 19) պէրէք ծիւ 20) խաշինքյ,*
*Ցէր ընինքյ բըլխանը 21) յէշինքյ,*
*Տըէսնանք իմ յարը կյամ ա,*
*Զօքինքյ վըէննէրը քաշինքյ։*

—

*Թուխպալա Թօն 22) չի կյամ 23),*
*Մըթնալա տօն չի կյամ,*
*Տըէղ ըմ շինտլ պէրց տըրտլ,*
*Ըչկըէրըէս հէչ քօն չի կյամ։*

—

*Թօռը կըյկա, արէվ կանէ,*
*Քումղարը տխրէվ կանէ,*
*Նէրակ էն ըլխճըկանը կընի,*
*Պարկը լիգյը տօն կյալի կընի։*

—

*Թօռը կյըկյա լավ 24) կանէ,*
*Քումչարը 25) տխրէվ կանէ։*
*Ցարը մատաղ ընի յարէն,*
*Վըէր սըրտծէն 26) ուրուն 27) կանէ։*

—

*Թօռը կյըկյա լավ կանէ,*
*Քումղարը տխրէվ կանէ,*

---

1) Մայր մտնելու մօտ է. 2) սիրում է. 3) հայրենիքից կը հեռացնի. 4) այր, քարանձաւ. 5) աւերակ. 6) խեր, բարի. 7) չար, հակառակը խօսել. 8) երեխայի. 9) ցցուել, 10) վար. յարէն. 11) ընկերների միջից. 12) մայր մտնելու վերայ է. 13) հալալ արէք, միք արգելի. 14) հայր և մայր. 15) ընկերների միջից. 16) Շուշի. 17) ղալայի. 18) շէմքումը, բերդի դռան մօտ. 19) ?. 20) ձու. 21) ?. 22) անձրև (վար.) Թօռ. 23) (վար.) կյալիս, կյայիս. 24) սաստիկ անձրևից գետնի վերան հոսող ջուրը. 25) շերամապահը 26) սիրածին. 27) տէր կը կանգնի.

Քուրը մատաղ ախպօրը,
Վըէր քըվէրը ուրուն կանէ։

—

Թօռնումըս կընի կուտանա,
Մաննումըս կընի մուտանա 1),
Աշան տըղա վըէր յէս տիւսկ յամ,
Հու կըկարէ թա մուտանա 2)։

—

Թօռնումըս 3) կա կուտանա, 4),
Մաննումըս 5) կա մուտանա 6),
Հու վըէր ընձոնտ ճօշ 7) անէ,
Հօքյին 8) տանէ սուտանա։
Թօրքը 9) մօրը կասէ նոնտ,
Սըէրտըս կըտրում չի քյըղանա,
Ինձ քյըփանա դադ 10) ըրէն,
Քյէզ ընձոնտ յադ 11) ըրէն։

—

Ժամէն հըղէն կանանչ ա,
Թօրքը հըյին ճանաչ ա,
Խիլտ վախտ ա պիւրթը կալած,
Տըէռ կըզած 12) ա մալանչ 13) ա։

—

Իմ ախճիգյը հիւր ընի,
Տալ չի հորիւր թումոնի,
Պիւրթ պէրէքյ պէժինքյ անինքյ,
Օղտէր պէռնինքյ հըղէ անինքյ։

—

Իմ յարը հօր ա քյէցալ,
Սըրէրումը քօն ա քյէցալ,
Թօռ ա յէկալ թըրչոլ չի,
Ցըփընջին 14) շօռ ա կյէցալ։

—

Լոլոն քյնից դին 15) անէ,
Մըէր վըէրթերը 16) տէն անէ,
Հըրան կյամա իմ յարը,
Կօխկէս նըստէ սէր անէ։

—

Լամըըս մամըըս կախ տըված,
Տըէղըս 17) մըէղըս վըէր քյըցոծ,
Հուվա տըէսալ տուցցաղում 18),
Նամարդ յարըս նստըցըրած։

—

Լիւսնընգյոն ընգածա մըէր
ծառէն։
Կաքավը նըստած ա քարէն,
Աչկըմ ածում կյոլիս չի,
Զուրանա ըստի տարէն։

—

Խաղ 19) կասիմ խաղէս կըլխէն,
Իմ հորոնց 20) բաղէն կըլխէն,
Էլ ասէլ չըմ հէրիքյ 21) ա,
Խան 22) յարըս մէլիքյ 23) ա։

—

Խընըէցէս 24) յըղըկոլոլ 25) ա,
Վըէչխարըս 26) կըղըկոլոլ 27) ա,
Էսա կյամա իմ յարը,
Բէղէրը շըղըկոլոլ 28) ա։

---

1) Մատանի. 2) մօտենալ. 3) Թոնրումս կայ. 4) կուտանա, երբ հացը ընկնում թոնրի մէջ և այրւում է. 5) մատիս մէջ. 6) մատանի. 7) խռովել. 8) հոգին. 9) Թուրքը. 10) բաժանել. 11) օտարացրին, օտար շինեցին. 12) գզած. 13) սանդրի վերան գզում և մալանչ են շինում, ապա մանում. 14) եափունջի. 15) ?. 16) հոր-դերը, 17) անկողին. 18) բանտում. 19) երգ. 20) հէրանց. 21) հե-րիք է. 22) խան, խանի պէս. 23) մելիք, իշխան է. 24) խնոցի. 25) իւղակալել. 26) ոչխարս. 27) կեղտ կալել է. 28) շաղով ծածկել է։